

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժնի մարզային հողային պետական տեսչության կողմից 2019թ. ընթացքում կատարած աշխատանքների մասին

Հաշվետու ժամանակաշրջանում կազմվել է մարզի հողային հաշվեկշիռը, ըստ որի մարզի վարչական տարածքը կազմում է 231013.0 հա, որից գյուղ. նշանակության հողեր՝ 189600.6 հա, այդ թվում վարելահող՝ 15741.8 հա, բազմամյա տնկարքեր՝ 1994.4 հա, խոտհարքեր՝ 5057.4 հա, արոտ՝ 92255.4 հա, այլ հողատեսքեր 74551.6հա: Մարզում ոռոգվող հողերը ընդամենը կազմում են 6725.4 հա:

Համաձայն ՀՀ կառավարության 17.09.2009թ թիվ 1066-Ն որոշմամբ Արենի, Գլաձոր և Ջերմուկ համայնքներում՝ բաժնի հետևողական աշխատանքների արդյունքում կատարվել են համայնքային և քաղաքացիների սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի փոփոխություն՝ ցածրարժեքից - բարձրարժեքի՝ փոփոխության են ներկայացվել 90.0 հա, որից փոփոխվել է խաղողի այգի 64.0հա , պտղատու այգի 26.0 հա, որոնք էլ արձածվել են մարզի 2019 թվականի հողային հաշվեկշռում: Այս գործընթացը շարունակվում է: Կատարվել է նաև բարձրարժեքից – ցածրարժեքի փոփոխություններ՝ Վայք համայնքի Ջեղեա բնակավայրի քաղաքացու սեփականություն հանդիսացող 1.6հա պտղատու այգին և Ջերմուկ համայնքի Հերիեր բնակավայրի իրավաբանական անձանց սեփականություն հանդիսացող 16.7հա վարելահողերը փոխվել են ցածրարժեք հողատեսքերի / վարելահողերի և խոտհարքերի:

Միջգերատեսչական հանձնաժողովին է ներկայացվել համայնքների վարչական սահմաններում գտնվող հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներում փոփոխություններ կատարելու 15 առաջարկություններ, որից 12-ին հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն, որոնք էլ

սահմանված կարգով փոխանցվել է համայնքի ղեկավարներին, մնացած 3-ը ընթացքի մեջ են:

« հողային օրենսգրքի 42-րդ հոդվածի համաձայն, մարզպետի կարգադրությամբ տեսչական ստուգումներ են կատարվել մարզի Գլաձոր, Եղեգիս, Արենի և Մալիշկա համայնքներում, հայտնաբերված թերությունների վերացման համար առաջարկություն է ներկայացվել և հստակ ժամկետ տրվել:/ ինքնակամ հողամասի զավթում և ոչ նպատակային օգտագործում 48 և 54 վարչական իրավախախտումների մասին օրենքով /

«ետևողական ենք եղել, որպեսզի համայնքների կողմից հողերի օտարման և վարձակալությամբ տրամադրման աշխատանքները իրականացվեն՝ « հողային օրենսգրքի պահանջներին համապատասխան:

Համաձայն « կառավարության 14.01.2010 թվականի թիվ 16-Ն որոշմամբ հաստատված կարգի « տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության համաձայնեցմանն ենք ներկայացրել Զառիթափի համայնքի վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող 0.126հա և 1.3հա հողերի օտարման առաջարկությունը: 0.126 հեկտարի համար նախարարությունը տվել է իր դրական եզրակացությունը, իսկ 1.3հա հողամասի օտարման աշխատանքները ընթացքի մեջ է:

Բաժինը ստացել է 26 քաղաքացիներից դիմումներ, բոլոր դիմումներին օրենքով սահմանված կարգով ընթացք ենք տվել:

Հողաշինության և հողօգտագործման բաժնի մարզային հողային պետական

տեսչության պետ

Մ. Մեսրոպյան